ԱԼՖԱ ՖԱՐՄԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇԱԽՄԱՏԻ ԱԿԱԴԵՄԻԱՆ

ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ ԵՆ ՇԱԽՄԱՏԻ ԱԿՈՒՄԲԱՅԻՆ ԹԻՄԱՅԻՆ

ՍԻՐՈՂԱԿԱՆ ՄՐՑԱՇԱՐ 3 ՓՈՒԼՈՎ

2022թ.

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

1. **ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ**

   Հայաստանի շախմատի ակադեմիա հիմնադրամ

2. **ԳԼԽԱՎՈՐ ՀՈՎԱՆԱՎՈՐ**

   Ալֆա Ֆարմ ՓԲԸ

3. **ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ**

   Մրցաշարին կարող են մասնակցել 2100-ից ցածր ազգային կամ միջազգային վարկանիշ ունեցող միայն չափահաս շախմատիստները:

4. **ՄՐՑԱՆԱԿԱՅԻՆ ՖՈՆԴ**

   ՄՐՑԱՇԱՐԻ հաղթող թիմի համար նախատեսած է 1 000 000 ՀՀ դրամ:

   Մրցաշարը կանցնկացվի 3 փուլով: Յուրաքանչյուր մրցաշարի համար նախատեսված են հետևյալ մրցանակները

Հիմնական մրցանակներ		**Հատուկ մրցանակներ.** լավագույն արդյունք ցույց տված մասնակից
I թիմ	Հանգստյան ուղեգիր ՀՀ տարածքում /6 անձ/	1-ին խաղատախտակ /առնվազն 5 խաղ խաղալու դեպքում/ Մեկօրյա տուր փաթեթ ՀՀ տարածքում
II թիմ	Մարզասրահի մեկ ամսյա բաժանորդագրություն /6 անձ/	2-րդ խաղատախտակ /առնվազն 5 խաղ խաղալու դեպքում/ Մեկօրյա տուր փաթեթ ՀՀ տարածքում
III թիմ	Խելացի ժամացույց /6 անձ/	3-րդ խաղատախտակ /առնվազն 5 խաղ խաղալու դեպքում/ Մեկօրյա տուր փաթեթ ՀՀ տարածքում
		4-րդ խաղատախտակ /առնվազն 5 խաղ խաղալու դեպքում/ Մեկօրյա տուր փաթեթ ՀՀ տարածքում
		Կին մասնակից /առնվազն 4 խաղ խաղալու դեպքում/ Խնամքի պարագաների հավաքածու

Նաև հատուկ սփոփիչ մրցանակ է սահմանված վերջին 7 տեղերը գրաված թիմերի միջև, որն ընտրվելու է վիճակահանությամբ:- Ընթրիք “Dragon Garden” ռեստորանային համալիրում:

5. ԺԱՄԿԵՏՆԵՐ

Ակումբային մրցաշարը կանցնկացվի 3 փուլով: Առաջին մրցաշարը տեղի կունենա 2022 թվականի մարտի 19-ին:

19 մարտի	11:00	1-ին տուր,
19 մարտի	11:30	2-րդ տուր,
19 մարտի	12:00	3-րդ տուր,
19 մարտի	12:30	4-րդ տուր,
19 մարտի	13:00	5-րդ տուր,
19 մարտի	13:30	6-րդ տուր,
19 մարտի	14:00	7-րդ տուր:

6. ՄՐՑԱԿԱՐԳ

5.1 Մրցաշարը կանցկացվի թիմային հաշվարկով՝ 4 խաղատախտակով (ցանկության դեպքում + 2 պահեստային խաղացող):

5.2 Մրցաշարը կանցկացվի ըստ ՖԻԴԵ-ի շախմատի կանոնների, շվեյցարական մրցակարգով՝ 6-7 խաղափուլով /կախված մասնակից թիմերի քանակից/:

5.3 Յուրաքանչյուր մրցախաղում թիմային հաղթանակը գնահատվում է 2 միավոր, ոչ-ոքին՝ 1 միավոր, պարտությունը՝ 0 միավոր: Մրցանակների հավակնող թիմերի հավաքած միավորների հավասարության դեպքում հաշվի է առնվում

ա/ թիմի անդամների անհատական արդյունքների հանրագումարը,

բ/ թիմերի միջև անհատական հանդիպման արդյունքը,

գ/ ըստ խաղատախտակերի վրա ցույց տված արդյունքի (1, 2, 3, 4 խաղատախտակներ):

Եթե այդ ցուցանիշն էլ է հավասար, ապա անցկացվում է լրացուցիչ մրցախաղ (մրցաշար-մրցախաղ՝ կայծակնային խաղի կանոններով յուրաքանչյուր խաղացողին տրվում է 5-ական րոպե):

Ընդհանուր ակումբային մրցաշարի հաղթողը կորոշվի 3 մրցաշարերից 2-ում ցույց տված լավագույն արդյունքների հանրագումարով:

7. ԺԱՄԱԿԱՐԳ

10 րոպե մինչև պարտիայի ավարտը (2 վայրկյան հավելումով՝ յուրաքանչյուր քայլին, սկսած առաջին քայլից):

8. ՄՈՒՏՔԱՎՃԱՐ

Մրցաշարի յուրաքանչյուր փուլի մասնակցության վճարը յուրաքանչյուր թիմի համար կազմում է 30000 ՀՀ դրամ:

Մրցաշարի կայքէջում http://tournaments.chessacademy.am/?lang=am անհրաժեշտ է սեղմել **ԳՐԱՆՑՎԵԼ** կոճակը, լրացնել բոլոր դաշտերը և կատարել վճարումը:

Բանկային քարտի բացակայության դեպքում մասնակցության վճարները կարող եք փոխանցել Հայաստանի շախմատի ակադեմիա հիմնադրամի հետևյալ հաշվեհամարին՝

Շահառու՝	Հայաստանի շախմատի ակադեմիա հիմնադրամ
Բանկ՝	Ամերիաբանկ ՓԲԸ
Հ/հ՝	1570018417800100
ՀՎՀՀ՝	02560522

Փոխանցում կատարելիս նպատակ դաշտում նշել **թիմի անունը, կոնտակտային հեռախոսահամար, մասնակցության վճար**:

9. ԳՐԱՆՑՈՒՄ

Հայտեր ներկայացնելու վերջնաժամկետն է 2022 թվականի մարտի 15-ը, ժամը 18:00-ն: Կանոնադրությանը կցված հայտը միայն լրացված վիճակում կարող եք ուղարկել info@chessacademy.am էլեկտրոնային հասցեին:

10. ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐ

Մրցաշարը կանցկացվի Հայաստանի շախմատի ակադեմիայում /ք. Երևան, Շևչենկո 34/:

11. Կոնտակտային տվյալներ

Հեռ՝ +374 10 448473, +374 43 448473, Էլ. փոստ՝ info@chessacademy.am